

ՄԻՒՌՈՆՈՐՀՆԵՔ Ի Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

ՄԻՒՌՈՆՈՐՀՆԵՔ . . . : Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենէն սրասառու և խորհրդաւոր արարողութիւններէն մէկը: Քսանչինդ տարիներէ ի վեր չէր կատարուած ան: Այս տարուան Սեպտեմբերի վերջերը և Հոկտեմբերի սկիզբները, ուրախութեան և հոգեկան միխթարութեան օքեր եղան, ոչ միայն Ս. Էջմիածինի, իշմիածինի մէջ և ամբողջ Հայաստանի, այլ և գաղթաշխարհի: Արտասահմանի ամեն կողմերէն պատգամաւորներ զիւրութիւններ ձեռք բերած կը փութային Ս. Էջմիածին, մասնակցելու հոն տեղի ունենալիք հոգեպարար արարողութեանց:

Սեպտեմբեր 23էն սկսեալ արդէն իրարու ետևէ օգի ճամբող Երեան կ'իջնէին և կը տեղաւորուէին շքեղ պահողներու մէջ: Սեպտեմբեր 27ին կը սկսին նախապատրաստական Ազգ: Եկեղեցական ժողովները, և տեղի կ'ունենային անհրաժեշտ կարգադրութիւններ, Կաթողիկոսական ընտրութեան և օծման, Եպիսկոպոսաց ձեռնազրութեան և Սրբալոյս Միւռոնի օրհութեան: Ուրբաթ օր Սեպտեմբեր 30ին, Ս. Էջմիածնայ Մայր Տաճարին մէջ, գրեթէ միաձայնութեամբ ընտրուեցաւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, յանձին Տ. Վազգէն Եպիսկոպոս Պալճեանի, և Հոկտեմբեր 2ին տեղի ունեցաւ Կաթողիկոսական օծումը: Հոկտեմբեր 6ին, նոյն քան հանդիսաւորութեամբ կ'օծուէին հօթը նորընծայ Եպիսկոպոսներ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ:

Շաբաթ՝ 8 Հոկտեմբեր 1955: Ի տօնի Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց, Սրբալոյս Միւռոնի օրհութեան օրը: Կանխաւ եղած կարգադրութեանց համաձայն, բաժնուած են Մայր Տաճարի մտից բոլոր տոմսերը: Հազարէ աւելի հաւատացեալները զբաւած են իրենց տեղերը Տաճարէն ներս, իսկ դուրսը, Տաճարին չուրջը և քաղաքին հրապարակներուն վրայ, խռնուած են հարիւր հազարաւոր ժողովուրդ, Մայր Հայրինիքի ամէն կողմերէն, որոնց համար ամենահետաքրքրական և սիրելի արարու-

թիւնը, և ամենուն աչքերը յառած են գէպի Վեհարանին գուռը:

Կէսօրուան ժամը տասնեւմէկին է: Ամբողջ հոգեսրական դասը, զլիսաւորութեամբ Վեհափառ Հայրապետի, հաւաքուած են Վեհարանին մէջ: Տասնեւից եպիսկոպոսներ կը զգեստաւորուին յաւուր պատշաճի եպիսկոպոսական ամենաշքել հանդերձանքով: Վարդապետներ, բազմաթիւ քահանաներ չուրջառազգեաց, Սարկաւադներ և Դպիրներ իրենց կարգի և աստիճանին չքեզանքով, բուրգառակիրներ, մոմականներ, ջահակիրներ և խաչվառ կրողներ կ'անցնին առաջ, ու կը կազմուի հսկայ թափօր մը, զլիսաւորութեամբ Վեհափառ Հայրապետի: Կը սկսի Հարաւափառոը և թափօրը յամբարայլ կը յառաջանայ բազմութեան մէջէն գէպի Մայր Տաճարը: Դպրաց դասը արդէն մուտ զործած է Մայր Տաճարէն ներս, իսկ Հայրապետը զեռ նոր կ'իջնէ Վեհարանին աստիճաններէն: Հայրապետական Ս. Պատարագ և Սրբալոյս Միւռոնի օրհութիւն: Եպիսկոպոսական դասը ի ձեռին ունին Ս. Էջմիածնի հույրական սրբութիւնները: — Կինաց Փայտը, Սուրբ Գեղարդը, Ա. Գրիգոր Լուսաւորչի Աջը, հին միւռոնի մեծ գործ կուսաւորչի Աջը, հին միւռոնի մեծ աղաւոնին, բալասանին սրուակը և ուրիշ հոտաւէտ իւղեր, խաչեր և Հայրապետները Ս. Աջերը: Վարդէ արդէն եկեղեցականաց թափօրը, Ս. Էջմիածնի գաւիթը, ու Վեհափառը ներքեն է ամպհովանիի զոր կը կրեն մասնաւորաբար արտասահմանէն ժամանած պատուական պատգամաւոր աղողայիններ և Հայրինիքի սիրուած վարդապետանասոնեղջը՝ Աւելիք Խառնական: Վեհափառ Հայրապետը արդէն հասած է Մայր Տաճարի զբան մեծ զանգակատան տակը: Կը զողանձին հինաւուրց կաթողիկէի քաղցրաձայն զանգակիրը հատիկ հաւիկի քաղցրաձայն զանգակիրը հատիկ հաւիկի, ու անոնց ձայնը կը խանուի բարետիկ, ու պաշտ ժողովուրդի սրտատրոփ աղօթքին և պաշտ ժողովուրդի առտատրոփ աղօթքին:

Ս. Պատարագի ժամի է : Ա. Էջմիածնի երգչախումբը ներդաշնակ ձայնով մը սկսում է արդէն ծանր եղանակով խորհուրդ խորինք: Իջման Առւրը Անգանին առջև կը կատարուի Ա. Պատարագի նախապատրաստական կարգն ու լուսցումը, և թափօրը նոյն չքեզանքով վեր կը բարձրանայ զէպի Աւագ Ասրանին բեմը: Բեմին վրայ զրուած է Արքալոյս Միւսոնի հրաշալի կաթոսան, համակ արձաթ և ոսկեղօծ, բարձրաքանդակ նկարներովը Տեառնական, առաքելոց և Ա. Լուսաւորչի, և ծածկուած եօթը ծանրագին շղարշ-

բողապետը այս օրուան, Առւրը Անդանին վրայ կը պատրաստէ հարկ եղածները: Ահա «Աղջոյնոի պահը» կը գաղրին Ս. Պատարագի երգեցողութիւններն ու կը սկսի Ա. Միւսոնի օրհնութեան կանոնը: Աղօթք, Սաղմոս, Շարական և Աւետարանական ու, Ա. Գրական ընթերցումներ իրարու կը յաջորդին: Կը լսուի «Կենդանարար Ասուած» շարականը, ձեռքերու վրայ բարձրացուցած կը բերին հին Արքալոյս Միւսոնի մեծ աղաւնին քողածածկէ, զոյգ բուրգառով, մամակալներով և լապաելնե-



Արքալոյս Միւսոնի օրհնութիւնը:

Ներով: Քառասուն օրեր շարունակ առաջ սօսեան և երեկոյեան ժամերգութիւններէն վերջ, կատարուած են Սրբալոյս Միւսոնի օրհնութեան նախապատրաստական կարգերը, ըստ ծիսի Հայց. Եկեղեցւոյ, և հասցուցած այսօրուան լրումբնու:

Կը շարունակուի քառաձայն Ս. Պատարագը ծանր և խորհրդաւոր: Ընծային վերաբերումը կը կատարէ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ Արքեպիսկոպոս. Գալֆայեան, իսկ Գեր. Տ. Մամբրէ Արքեպիսկոպոս Միւսոնին արա-

բով: Լուսարարագետ Տ. Ասհակ Արքազանը կը վերցնէ Արքալոյս Միւսոնի կաթոսան ծածկող եօթը չգարչները, ու կը բանայ կափարիչը, մինչ դպիրները կ'երգեն սացեր Տէր այսօ զգանձր երկնալինց շարականը և նոյն ատեն Վեհափառ Հայրապետը կը թափէ Արքալոյս Միւսոնի կաթոսային մէջ ծաղիկներու մաքուր հիւթը և ապա բալասունը, և կ'առնէ հին Միւսոնի մեծ աղաւնին: Կը հնչեն գարձեալ Ս. Էջմիածնի զանգակները միահամուռ, կը թնդայ Տաճարը հաւատացեալներու աղօթքներուն մրմանջներովը և

հետաքրքիր՝ աչքերը սեղանին կը կապուին։ Յուզում, արցունք և հոգեկան ուրախութիւն, իրարու կը խառնէ այս շատ խորհըրդար պահը, և մարզիկ իրենցը չեն պատկանիր այլես։ Կը բարձրանան խորհուրդին։ Ահա կը լսուի Շնորհալի Հայրապետին խրոխտ ձայնը, «Առափելոյ ալպանոյ» շարականին հատիկ հատիկ երգեցողութեամբը, կը հեզու հին Միւսոնը կաթսալին մէջ, խառնելով հին դարերու սրբութիւնը նոր օրերու խորհուրդին հետ։

Ապա կ'առնէ Վեհափառը կենաց Փայտին համակ սոկեայ և զահարակուս խաչը, ընկղմամբ կը տեսանազրէ Ա. Միւսոնը ըսկելով։ «Օրհնեսցի եւ սրբեցի Միւսոնն այս նշանաւ Սուրբ Խաչիւ։ Եւ ապա կ'առնէ Ա. Գեղարզը ու կ'ըսէ։ «Օրհնեսցի եւ սրբեցի Միւսոնն այս, Սուրբ Խաչիւ եւ Սուրբ Աւետարանաւ եւ Սուրբ Գեղարդիամբաւ։ Նոյնպէս առնելով Ա. Գրիգոր Լուսուրչի սոկեզօծեալ մեծ Աջը, թաղելով և տեսանազրելով Սուրբ Միւսոնը կ'արտասաննէ։ «Օրհնեսցի եւ սրբեցի Միւսոնն այս, Սուրբ Խաչիւ եւ Սուրբ Աւետարանաւ եւ Մերոյ Լուսաւորչի Ազուլս, այս նշանաւ...»։ Վերջացած է օրհնութիւնը։ Օրհնուած է Սրբալոյս Միւսոնը որ պիտի սրբէ և չնորհազարդէ բիւրաւորներու ճակատներն ու աջերը։ Կը գնեն կափարիչը և կը ծածկեն զարձեալ եօթը սոկեդրուազ շղարշներովը։

«Աղջոյնի պահն է։ Նախ ինքը, Պատարագիչ Վեհափառը կը մօտենայ և ծընկաչուք կ'առնէ «Աղջոյն»ը Սուրբ Խորհուրդին և կը համբուրէ Սրբալոյս Միւսոնի կաթսուն, որուն կը հետեւն եպիսկոպոսաց և հոգեօրականաց դառը, և հաւատացեալ ժողովուրդը։

Կը շարունակուի Հայրապետական Ա. Պատարագը ծանր և խորհրդաւոր։ Զգեստաւորեալ եպիսկոպոսաց դառը՝ բեմին

դրայ. իսկ վարդապետներ և քահանաներ՝ զասին մէջ, բեմին առջել։

Յաւարտ Ա. Պատարագի, «Որ օրինիսա աղօթքէն վերջ նորէն կը կազմուի նոյն չքեզ թափօրը, և վեհափառը Ա. Պատարագի զգեստաւորւմով և սեղմիածինի ի հօրեա շարականի ծանր երգեցողութեամբ, ամպհովանիթի ներքեց։ Կ'առաջնորդուի Վեհարան և հոգեօրականք և բոլոր ներկաները համբուրելով վեհա Հայրապետին Ա. Աջը կ'արձակուին ի խաղաղութիւն։

Իսկ Սրբալոյս Միւսոնի կաթսուն կը մնայ Մայր Տաճարի բեմին վրայ մինչեւ երեկոյեան ուշ ատեն, ուր բազմահազար բարեպաշտ ժողովուրդ կը մօտենան ի համբոյը սրբութեան։

Արդարե յուզիչ էր տեսարանը այդ մեծ օրուան, որ խկապէս չնորհարացխութեան հանգէս մըն է Հայց։ Եկեղեցոյ բուրուր զաւակներուն։ Հայ բարեպաշտ ժողովուրզը զարերով հաւատարիմ մնացած իր հայրենի ժառանգութեանց և սրբութեանց, այս առթիւ ևս առաւել մեծ հաւատքով մը յայտնաբերեց զայն։

Հոգեկան մեծ խոսվքով մը կը տեսնէ մէկը Մայր Տաճարին մէջ, որմերուն և մոլութիւն տակ, բարեպաշտ հոգիներ զունդեր կազմած, երկիւզած և թաղկատարած, որոնք արցունքով կը փառարանին զիստուած, որ արժանացուց զիբենք այս օրուան։

Սրբալոյս Միւսոնը քրիստոնէական առաջին զարերէն ի վեր հայ ժողովուրդի հաւատքին մէջ պաշտելութեան հասած նույնական և չնորհարացխո սուրբ իւղը եղած է, ու շատ բնական է որ անոր օրհնութեան հանգէսն ալ նոյնքան հոգեպարար և վեհագութեանով պիտի լեցնէր ժողովուրդին հոգին։

ՀԱՅԿԱԶՈՒԽՆ ԵՊԱ. ԱՅԲԱՀԱՄԵԱՆ

